**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն N 1**

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

***«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

ք. Երևան 07 մարտի 2016թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն բանկի Խորհրդի թիվ 2/06-15.01.16թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև ս.թ. փետրվարի 06-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել ժողովի անցկացման օրվա դրությամբ վերադարձված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:

Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են՝

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 933,335 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 865,127 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 92.69%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր են ճանաչվել 1 քվեաթերթիկ 13 ձայնի իրավունքով՝ քվեարկության կանոնները խախտելու պատճառով:

Քվորումը ապահովված է:

Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը՝

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. Բանկի բաժնետոմսերի 12-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով բանկի կանոնադրական կապիտալը 3,167,022,500 ՀՀ դրամ հաստատելու մասին:
3. Բանկի Կանոնադրության փոփոխված տարբերակի վերաբերյալ:
4. Բանկի Խորհրդի անդամ, ՎԶԵԲ ներկայացուցիչ Իրակլի Մանագաձեի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:
5. Բանկի Խորհրդի անդամ, ՎԶԵԲ նոր ներկայացուցչի ընտրության վերաբերյալ:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցերի, բաշխվել են հետևյալ կերպ.

| | | | |
|---|---|---|---|
| 1. Առաջին հարց | կողմ | 864,914 ձայն կամ մասնակիցների ձայների | 99.975% |
| | դեմ | 0 ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 200 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.023% |
| | անվավեր | 13 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.002% |
| 2. Երկրորդ հարց | կողմ | 864,914 ձայն կամ մասնակիցների ձայների | 99.975% |
| | դեմ | 0 ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 200 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.023% |
| | անվավեր | 13 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.002% |
| 3. Երրորդ հարց | կողմ | 864,914 ձայն կամ մասնակիցների ձայների | 99.975% |

| | | | |
|---|---|---|---|
| | դեմ | 0 ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 200 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.023% |
| | անվավեր | 13 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.002% |
| 4. Չորրորդ հարց | կողմ | 864,914 ձայն կամ մասնակիցների ձայների | 99.975% |
| | դեմ | 0 ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 200 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.023% |
| | անվավեր | 13 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.002% |
| 5. Հինգերորդ հարց | կողմ | 864,914 ձայն կամ մասնակիցների ձայների | 99.975% |
| | դեմ | 0 ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 200 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.023% |
| | անվավեր | 13 ձայն կամ մասնակիցների ձայների | 0.002% |

Այսպիսով, ելնելով քվեարկության արդյունքներից.

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովը մեկ տարվա լիազորությունների ժամկետով, հետևյալ կազմով.
Նախագահ՝ Ա. Խաչատրյան
Անդամներ՝ Հ. Եգորյան, Ե. Ալեքսանյան

2. Հաստատել բանկի բաժնետոմսերի 12-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով բանկի կանոնադրական կապիտալը 3,167,022,500 ՀՀ դրամ:

3. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակը:

4. Վաղաժամկետ դադարեցնել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ, ՎԶԵԲ ներկայացուցիչ Իրակլի Մանագաձեի լիազորությունները:

5. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամի պաշտոնում ՎԶԵԲ նոր ներկայացուցիչ Իննա Յաքբարովային:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողով.

նախագահ՝ Ա. Խաչատրյան

անդամներ՝ Հ. Եգորյան

Ե. Ալեքսանյան